

- | | |
|---------------------------------|-------------------------------------|
| 108. Յովհ. Պօլֆոս Սահակի | 123. Անտոն Գաֆէճի. |
| 109. Աւետիք Պօլֆոս Սահակի. | 124. Յարութիւն Բաթարեան. |
| 110. Յարութիւն Գոռնուհար Սահակի | 125. Ուրսուլ Նոյնեալ Դօսերաշի. |
| 111. Յօհան Գրիգորի Յօհաննեանց. | 126. Աստուածատուր Յրկիչ Յարութիւնի |
| 112. Ալեքսան մէի. Յակոբի | |
| 113. Գէորգ մէի. Յակոբի. | 127. Սարգիս Պալասանի. |
| 114. Վարպետ մէի. Յակոբի. | 128. Ղազար Սօքոնար Խաչիկի |
| 115. Յակոբ տիրացու Սահակի. | 129. Յովհ. Երկայն Օգոստոսի. |
| 116. Յովհ. Գրիգորի Յ. Յակոբեան. | 130. Վարդան Գաթարճի Յակոբի. |
| 117. Լաճի Նշիա Պրըքլեանց. | 131. Պօղոս Նիկոյի. |
| 118. Խաչերես Յոհն. տէրտէրանց. | 132. Նիգօլ մէի. Լուսիկի. |
| 119. Յարութիւն Ուրմանցի Մկրտչի. | 133. Աստուածատուր Մնացի Գօժո-բարինց |
| 120. Մանուկ Խաչիկի Մանուկեանց. | |
| 121. Գրիգոր Անտոնի Մատրեանց. | 134. Պօղոս Սամնցի Անտոնի. |
| 122. Պօղոս մէի. Յակոբի | |

Այսպիսի են այժմ ի Փօթիշան գտանցեալ պրատուալի կըտրիճքն, զոր կրկին օրհնութեամբ հաստատեցաք: Գրիգոր Արքեպիսկոպոս Սրբոյ Էջմիածնի և առաջնորդ կողմանցս Հայոց:

ԿՐՕՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ.

(Շարունակ. և լէրջ):

Ա. Աստուծան — Նախապարտապարտութիւն և Կաթիլ-Գաթիլ.

Իւրաքանչիւր մեթոդական միութիւն կամ հաստուած պէտք է ունենայ իւր որոշ նպատակը. այս նպատակը հաղորդելուց յետոյ սկսուած է Ա. աստիճանը. այստեղ պէտք է սանիկի ունեցած հին իւրացուցանող մտապատկերները և փոքր յիշեցնել, որպէս զի նոր. նիւթի ըմբռնուած զիւրին լինի: Ուրեմն Ա. աստիճանի գլխաւոր գործն է յաջորդող պատմութեան համար հոգ պատրաստել. դորա հասկացողութեան համար աշխատել և մանկանց սրտերը սպասող գրութեան մէջ գնել: Այս նախապատրաստութեամբ մենք սանիկների մէջ արթնացնում ենք այն մտապատկերներն, որոնք նոր տրուելիք նիւթի հետ կապակցութիւն ունին. ուրեմն ուսուցիչն առաջուց պէտք է մտածէ և կշռադատէ թէ ի՞նչ մտապատկերներ պէտք է վերարտադրել սանիկի գիտակցութեան մէջ, նա պէտք է սանիկի

կեանքի հանգամանքները, գիտեցածը և փորձը համեմատե-
պատմելի նիւթի հետ և դորա համեմատ կարեւոր մտապատ-
կերներ վերարտադրէ նորա մէջ, Պէտք է աշխատել որչափ կա-
րելի է, որ այդ վերարտադրութիւնը առանձին - առանձին
հարցերով չլինի — այլ կապակցութեամբ:

Բ. Կարգաւ — յաւելմանարարութիւն և խմբագրութիւն:

Երբ արդէն նախապատրաստիչ նիւթի միջնորդութեամբ սա-
նիկի ուշադրութիւնը լարել ենք Նոր Նիւթի համար. այս աս-
տիճանի վրայ պարզապէս կամ չարդարապէս ենք այդ նորը և սանի-
կին կրկնել տալիս: Արդեօք ճշմարտ է հեշտը, կարգաւ՝ թէ պատ-
մելը. կարգաւ պէտք է գիրադասել սանիկի ինքնագործունէ-
ութեան տեսակէտից. ով որ համակրում է այդ տեսակէտը,
նա կընտրէ չարդարապէս նոր նիւթ աւանդելու կամ յանդիմանա-
րարելու եղանակը: Սակայն եթէ սանիկները դեռ ևս վտրժ
չեն կանոնաւոր ընթերցանութեան և կարգաւ ժամանակ
պէտք է կակազին, այն ժամանակ ընթերցման ազդեցութիւնը
բոլորովին կրկնուի և անօգուտ կլինի. այդ դէպքում աւելի
լաւ է, որ ուսուցիչը նոր նիւթը աւանդէ պարզապէս: Այդի
առաջ ունենալով մեր դպրոցների առաջին դասարան աշակերտ-
ների անվտանգ ընթերցանութիւնը՝ մենք առաջարկում ենք
սրբազան պատմութեան առաջին մասի համար պատմելով նոր
նիւթ աւանդելու եղանակը. իսկ երկրորդ մասն որ պէտք է
մշակուի երկրորդ դասարանը, կարելի է կարգաւ, վասն զի
երկրորդ դասարանի աշակերտներից արդէն կարելի է պահան-
ջել կանոնաւոր առդարձութեամբ ընթերցանութիւն:

Երկրորդ աստիճանի վրայ միանգամից չպէտք է աւանդել
ամբողջ նոր նիւթը, այլ հատուածներով, որովհետեւ աւանդե-
լուց յետոյ մենք պահանջում ենք, որ սանիկը կրկնէ այդ հա-
տուածը. արդ եթէ հատուածները երկար և մեծ լինին, սա-
նիկները չեն կարող մեր այդ պահանջը կատարել, երբ սանիկը
պատմում է հատուածին, ուսուցիչը պարզ կերպիւ նկատում է
թէ ճիշդ կէտերը մութ են միացել նորա համար և բացատրում
է այդ կէտերը, Այդ բացատրութիւնից յետոյ սանիկը կրկնի

պատմում է հատուածը ճիշտ և անխալ ու հասկանալի կերպիւ և սորանով վերջանում է Բ. աստիճանի առաջին մասը: Նրբ բոլոր հատուածներն այսպէս պարզ և հասկանալի են լինում ուսնիկներին, այն ժամանակ նոքա պէտք է ամբողջ միութիւնը կապակցութեամբ պատմեն. երբ այդ ևս տեղի ունեցաւ, այն ժամանակ ուսուցիչը պէտք է զրուցատրէ սանիկներին հետ այդ միութեան բովանդակութեան մասին. Սրբագոյն պատմութեան այդ բովանդակութիւնը պէտք է մի միջոց լինի սանիկի մէջ արթնացնելու կրօնական և բարոյական զգացմունքներ. այս բարոյական զգացմանց և դատողութեանց վրայ պէտք է հիմնուին ապագայում բարոյական սկզբունքները: Պերոյիչեալ զրուցատրութեամբը պէտք է հասկանալի կացուցանէ թէ արտաքին հանգամանքները և գործող անձանց ներքին, հոգեկան դրութիւնը. այս զրուցատրութեամբը պէտք է տեղի ունենայ երեք տեսակէտից՝ այն է քաղաքակրթական, պատմական, աշխարհագրական և կրօնական—բարոյական. սակայն կրօնական—բարոյականը պէտք է առաջին տեղը բռնէ, այդ պատճառով և հետեւեալ աստիճանների վրայ մշակվում է միայն կրօնական—բարոյականը:

Գ. աստիճան — Կապակցութիւն.

Սա ուղղակի կապակցվում է միութեան կրօնական-բարոյական նիւթի հետ և կազմում է Բ. աստիճանի շարունակութիւնը. զանազանութիւնը միայն նորա մէջն է, որ այստեղ ուսուցիչը յառաջ է կոչում այլ, ուսնիկներին յայտնի և նման կրօնական - բարոյական մտապատկերներ՝ կապակցութեան կամ համեմատութեան համար. որպէս զի մէկ կողմից մտաւոր շրջանի միութիւնը ամրապնդուի և միւս կողմից առանձին կօնկրէտ գէպքերից ընդհանուր միտքը գուրս բերուի: Որչափ աւելի կօնկրէտ գէպքեր յառաջ բերուին, այնչափ ևս կհաստատուի ընդհանուրը և կկազմի մի հոգեւոր ոյժ, զօրութիւն:

Դ. աստիճան — Ժամակարգութիւն.

Երբ արդէն նախորդ աստիճանների միջնորդութեամբ դուրս

ենք բերել միութեան մէջ պարունակուած կրօնական - բարոյական գաղափարը. սա կոչվում է Դ. աստիճանը. պէտք է աշխատել որ այս գաղափարը արտայայտուի սուրբ գրքի մի որևէ վկայութեամբ՝ համառօտ նախադասութեամբ. այս նախադասութիւնները պէտք է կրկին բացատրել, կարգաւորել և գրի առնել.

Ե. աստիճան — Գործարարութիւն.

Երբ արդէն դուրս ենք բերել կրօնական - բարոյական միտքը, կնշանակէ այն ուսուցման գործողութիւնը վերջացրել ենք. այժմ մնում է ապացուցանել, թէ արդեօք այդ միտքը կատարելապէս հասկացուել, այլ նման գաղափարների հետ կապակցուել և մանկան սեպհականութիւն է դարձել թէ ոչ. Այս կարելի է փորձել մի նկարի վրայ, որ ներկայացնում է մշակուած նիւթի գաղափարը. սանիկը պէտք է ինքը կապակցութեամբ նկարագրէ և բացատրէ՝ թէ ի՞նչ է ներկայացնում այդ նկարը. Այս աստիճանի վերայ պէտք է փորձել նաև բարոյական մտքերի նախադասութեանց գործադրութիւնը. ուսուցիչը տարբեր խնդիրներ է տալիս, որպէս զի տեսնէ՝ թէ արդեօք սովորած այդ մտքերի միջնորդութեամբ սանիկները կարողանում են այլ հարցերին պատասխանել. Այս աստիճանի ամենագլխաւոր գործն այն պէտք է լինի, որ սանիկները կարող լինին սովորած այդ բարոյական մտքերը իւրեանց կեանքի մէջ Գործ Դնել. երևակայութեամբ պէտք է սանիկը իրեն կեանքի մի որևէ հանգամանքի մէջ ենթադրէ, որ նման է հատուածի մէջ յերևան եկող անձի հանգամանքին. Այս երևակայած հանգամանքը պէտք է այնպիսինը լինի, որի մէջ կարող է ընկնել, կամ պէտք է ընկնէ սանիկը վաղ թէ ուշ. երբ այդ տեղի ունենայ, այն ժամանակ մեր սանիկը կարող կլինի կրօնական - Բարոյական «կրօնական» առաջնորդուելու և այդպիսով ուսուցման երկար գործողութիւնը յաջող վերջ կունենայ.

Թէ մեր յառաջադրած տեսութեանը ի՞նչ չափով է համապատասխանում ԱրԺ. Սահակ քահանայի Սրբազան պատմութեան նիւթի մշակումն՝ թող ընթերցողն ինքը սոճամբ տեսնէ հե-

ուեեալ օրինակից: (Յառաջ բերել Սրբազան պատմութիւնից § 7. Աստուած կանչում է Աբրահամին, էջ 13. և դորա նիւթի մշակումն կրօնի դասագրքից այսպէս § 7 էջ 42-ից մինչև 49. բոլոր ստորիճաններով հանդերձ):

1881 ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ.

Տպիս.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԻԶՄԻՐԵԱՆ ԿՑԱԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

Ի ՀԱՆԳԻՍԻ

ՅԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱՐԱՆՈՒԹԵԱՆ

Ի 29 ՅՈՒՆԻՍԻ 1889

Այս երրորդ տարեշրջանն է այն գրական հանդիսին որ տեղի կունենայ աստ ի մայրաքաղաքին, ըստ բարենպատակ կտակի բարեյիշատակ Յովսեփայ Իզմիրեանց Ազլարեցւոյ, որ ինչպէս իւր կենդանութեան ատեն քաջալեր հանդիսացաւ ազգային պատմութեան և դպրութեան համար աշխատող գրիչներու, նոյնպէս և յետ մահուան կտակաւ աւանդած է շարունակել այդ քաջալերական նպատոր առ արժանաւորս, ի ձեռն Ազգային Պատրիարքարանի կարգեալ Յանձնաժողովոյ, յատուկ հանդիսիւ և յաւուր հանդիսաւոր տօնի Սրբոց երանելի Թարգմանչոց Մեծիկ Սահակայ և Մեսրոպայ բազմերախտ Հարցն մերոց, որոց անմուսնալի և վեհ յիշատակը կը տօնէ այսօր մեր Հայրենի Առաքելական Եկեղեցին:

Իզմիրեան կտակի Գործադիր Յանձնաժողովոյս Ատենապետ Վսեմ. Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան դէպ յեւրոպա ճանապարհորդելուն համար, այսօր բացակայ կը գտնուի սոյն Հանդիսէն. բայց իւր կարծիքներն գրաւոր թէ բերանացի հա-